



4 հոկտեմբերի 2010

Ժ-077/10

Տիկին Յրանուշ Հակոբյանին
ՀՀ սփյուռքի նախարար
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Մեծարգո նախարար,

Ուրախ եմ ՀՀ սփյուռքի նախարարության 2-րդ տարեդարձի առիթով անձամբ Ձեզ եւ գերատեսչության ողջ անձնակազմին փոխանցել սրտագին իմ շնորհավորանքներն ու բարեմաղթությունները:

Դրվատելի է, որ շատ կարճ ժամանակաընթացքում նախարարությունը կարողացավ կայանալ իբրեւ կուռ, գործուն պետական մարմին եւ նկատելի հաջողությունների հասնել ազգաշահ այն առաքելության մեջ, որը կոչված է համախմբելու Սփյուռքի մեծ ներուժը, խթանելու Հայաստան-Սփյուռք տնտեսական գործակցությունն ու գիտամշակութային մերձեցումը: Հավատացած եմ, որ առաջիկայում Ձեր ղեկավարած կառույցը նոր, ավելի ցայտուն նվաճումներ կարձանագրի համազգային մի շարք հասունացած խնդիրների շուրջ միասնական դիրքորոշում ձեւավորելու գործում:

Ձեզ եւ ուղորտի բոլոր ծառայողներին կրկին մաղթում եմ քաջառողջություն, ծրագրերի անշեղ կենսակազմեւ անձնվեր աշխատանքի բերկրանք:

Բարեկամաբար՝

- ՇՏԸ

Ռաֆֆի Կ. Հովհաննիսյան

ՀՀ ՃԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ՍՓՅՈՒՐՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մոխր քրճ 2546-10
«05» 10 20 10 թ.